

Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

48 99

ՊՐՈԼԵՏԱՐԻԱՆ ԲՈՒՆ ՅԵՐԿՐՈՅԻ ՄԻԱՅ Ք.

Ա. ՏԱՄՈՒԻ

ԿՈԽՈՎԿՑՈՒԹՅՈՒՆԸ

ՅԵՎ

ՈՊՊՈԶԻՑԻՑԻԱՆ

(Հ. Կ. Կ. (Բ) XIX ՀՅԱՄԱԳՈԽՄԱՐՈՒՄ
ԱՐՏԱՎԱՐԱՆԱԾ ԾԱՌ)

Թարգմ. Հ. ՏԵՐ-ՀԱՅ. ՀԱՅԱՀԻԱՅԱՆԻ

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1926

3ԿԴ1

Կ - 83

15 JUL 2005

14 NOV 2009

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԽՈՐ. ՍՈՑԻԱԼԻԱՏ. ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Պրոլետարիատ բոլոր յիշերների, միացե՛ք:

Ա. ՏՈՄՈՎԻ

ՅԿՊԴ
Կ. - 83

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՑԵՎ ՈՊՊՈՋԻՑԻԱՆ

(Բ. Կ. Կ. (թ) XIV համազումարու
արտասանած նառը)

1003
14387

Քարգ. Հ. ՏԵՐ-ՀՈՎՀԱՆԻՍՅԱՆԻ

2509
1226

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1926

23 AUG 2013

4899

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ՌԴՊՈԶԻՑԻԱՆ

Ընկերներ, յերբ այստեղ ճառեր հնչվեցին այն
մասին, թե համագումարում կուսակցությանը մոլո-
րության մեջ զցեցին, յերբ Քաղըյուրոյի անդամնե-
րի կողմից մենք հայտարարություններ լսեցինք այն
մասին, թե Քաղըյուրոն վոչ մի քաղաքական գիծ չի
ունեցել, — այդ բոլորից հետո մենք իրավունք ունենք
վոչ միայն համագումարի յուրաքանչյուր մասնակցո-
ղի, այլև մեր կուսակցության յուրաքանչյուր անդա-
մի համար պարզել թե այդ բոլորն ինչպես պատա-
հեց, յերբ պատահեց և ինչու պատահեց:

Նախևառաջ յես կը պատասխանեմ այն հարցին,
թե ընկ. ընկ. Զինովիկը և Կամենեց յե՞րբ գտան, վոր
Կենտկոմն ու նրա Քաղըյուրոն, վորի ամենից ազգե-
ցիկ անդամներից եյին նրանք, վոչ մի քաղաքական
գիծ չունեն, Յե՞րբ սկսվեցին ձևակերպվել այն տարա-
ծայնությունները, վորոնց առթիվ, իրը թե, նրանց
ըերանը փակում եյին, Յե՞րբ սկսվեցին առաջին—
նույնիսկ վոչ թե տարածայնությունները, — այլ թյու-
րիստացությունները:

Նրանք սկսվեցին վերջին դիսկուսիայից շատ
չանցած, նրանք ծագեցին տարբեր ըմբռնումներից,
նախկին ոպպոզիցիայի սխալված ընկերների նկատ-



Գրառեալ. № (բ) 435 Պ. № 1437. Պետրաս. № 369. Տիր. 3000

Պետրասի Խ սպարան Անդամնում

մամբ տարբեր վերաբերմունք ունենալուց: Ճիշտ ե
այս, թե վոչ (ձայներ Տեղերից. «Ճիշտ ե»):

Ճիշտ ե: Դուք հիշում եք ընկեր Ստալինի այն
ժառը, վոր նա Տրոցկու յելույթի առթիվ 1925 թվի
հունվարին արտասանեց Մոսկվայի կոնֆերենցիայում:
Վոմանք այն կարծիքին եյխն, վոր յեթե ընկ. Տրոց-
կին սխալվել ե, ապա ուրեմն հարվածելը գեռ քիչ ե,
սրան պետք ե խաչ հանել: Մյուսները գտնում եյխն,
վոր մեր կուսակցությունն այնքան ել հարուստ չե-
ույժերով, վորպեսզի յուրաքանչյուր սխալվող ընկե-
րոջը,—իսկ մեղանում շատերն են սխալվել զանազան
հարցերում,—վերջնականապես ջախջախենք, այն ժա-
մանակ յերբ կուսակցությունն արդեն նրա ոը-
խալն ուղղել ե, փոխանակ թույլ տալու, վոր նա
կրկին նորմալ աշխատանքի անցնի: Այսպիսի մոտե-
ցումը մենք սխալ եյխնք համարում: Հենց դրանից ել
ծագեց առաջին գործնական տարածայնությունը: Բայց
դրանով հարցը չփակվեց: Այդ առաջին տարածայնու-
թյունից իսկույն ևեթ ծագեց յերկրորդ տարածայնու-
թյունը և այն արդեն կազմակերպչական ձեռնար-
կումների ասպարեզում: Ինչնվ արտահայտվեց այդ
տարածայնությունը:—Նրանով, վոր նախկին ոպպո-
զիցիայի վերաբերյալ վերոհչյալ հարցը փոխազրվում
է... ի՞նչ եք կարծում, ուր:—այդ հարցը տեղափոխ-
վում ե Կոմյերիտմիություն: Քաղբյուրոյի կարծիքի
գեմ, լինինիստների մեծամասնության կարծիքի գեմ
գուրս ե բերվում նոր ուժ՝ Կոմյերիտմիությունը: Յեկ
մի ե առաջին տնտեսմ այդ հարցը մացնում:—Կոմյե-
րիտմիության Լինինգրադի կազմակերպությունը:

Լավ, իսկ Լինինգրադի կուսակցական կազմակեր-

պության կողմից յեկած ընկերները, այն կազմակեր-
պության, վորը, հասկանալի յե, ղեկավարում և և
Կոմյերիտմիությանը,—գիտեն արդյոք այս մասին,
թե նրանք տեղեկություն չունեն. իբր յերիտասար-
դության արածն և այդ և իրենք դրա համար հանցա-
վոր չեն: Ե՛, ընկերներ, թող ով ուզում ե, ձեզ հավա-
տա, բայց մենք այնքան ջահել չենք և այնքան ել
անփորձ չենք, վոր կարծենք, թե Լինինգրադում Կոմ-
յերիտմիությունն այն աստիճան մեկուսացած, Լինին-
գրադի նահանգական կոմիտեյից այնքան առանձնա-
ցած մի կազմակերպություն ե, վոր նա կարող և իր
ցանկությամբ անհել այն ամենը, ինչ ուզում ե:

Յեկ ահա յես հարց եմ տալիս համագումարին:—
Ճիշտ են արդյոք ներկուսակցական տարածայնու-
թյունների և գործնական հարցերի շուրջը ծագած ընդ-
հարումների վերացման համար գործադրվող այս մե-
թողները: Այս հարցում ընկերները փոքրամասնու-
թյունն կազմեցին: Յեկ ի՞նչ—միթե այդ փոքրամաս-
նությունն ու մեծամասնությունը կազմվեց յերկու
ֆրակցիաներից, վորոնք սկզբունքային հարցերում
տարակարծիք եյխն:

Թույլ տվեք ձեզ հիշեցնել, վոր անցյալ համա-
գումարում մենք աշխատում եյխնք միասին, ձեռք-
ձեռքի տված, մեզ համագումարի անդամ ընտրեցին՝
հիմք ընդունելով միևնույն պլատֆորման, վերջապես
գիտուստիայի ժամանակ մենք բոլորս մարտնչում ե-
յինք ձեռք ձեռքի տված: Ապա ուրեմն, հարց եմ տա-
լիս, վորտեղից ծագեց տարածայնությունների վե-
րացման այսպիսի մեթոդը: Բանից դուրս և զալիս,
վոր բավական եր՝ միայն առաջին գործնական հարցը:

առթիվ փոքրամասնություն կազմվեր, վորպեսզի անմիջապես կենտկոմից այդ հարցը բարեխղճորեն փոխադրվեր... Ի՞նչ եք կարծում, ուր Գերագույն ինստանցիան—Կոմյերիտմիության կենտկոմը։ Կուսակցության կենտկոմի դեմ ստեղծվում ե նոր Փրոնտ—Կոմյերիտմիությունը։ Կոմյերիտմիությունը հակադրվում ե կենտկոմին։ Այդ մեղ դուր չեկալ, ընկերներ։ Յես կարծում եմ այդ ձեզ ևս դուր չի գա։

(Բուռն ծափահարություններ)։

Բայց մենք, իսկապես ասած, այստեղ ի՞նչ արինք։ Ամուր խփեցի՞նք վորևե մեկի ձեռքերին, վորպեսզի զսպեցի՞նք նրան։ Կապեցի՞նք, կաշկանդեցի՞նք վորևե մեկին։ Մենք ամենից բարձր գնահատեցի՞նք լենինիստների շարքերում գոյություն ունեցող միությունը։ Յեզ մենք, դուքն և սիալ կերպով, գատապարտեցի՞նք յերիտասարդությանը, յերեխաներին թակեցի՞նք և այնպես ձեսցրի՞նք, վոր իբր մենք այլիս վոչի՞նչ չենք նկատում։ Ուրիշ խոսքով, կարծես մենք ասացի՞նք. քաշե՞ք ձեր ձեռքերը, մենք ամեն ինչ տեսնում ենք, ավելի զգույշ յեղեք վորպահներում (Պօ-
վօրոտն)։

Այժմ տարածայնությունների հետազա դարպացման մասին. գոյություն ունեյի՞ն նրանք 14-րդ կոնֆերենցիայից առաջ։ Այս, գոյություն ունեյին։ Ի՞նչն եր տարածայնությունների եյությունը։ Վեր կետին եյին վերաբերում տարածայնությունները, Յերբ մենք բանաձև եյինք մշակում հանդես յեկավ արդյոք ընկ. Կամենելը և հայտարարեց, թե՝ «Դրանով դուք զիջում եք անում կուլակին»։ Յեզ միթե այդ մասին մենք կը վիճեյինք։ Վոչ, մենք վիճում եյինք այն հարցե-

մասին, վորն այժմ, կարծես, ամենահիմնականը չե։ Մենք վիճում եյինք այն մասին, թե հնարավնը և արդյոք սոցիալիզմի կառուցումը մի յերկրում։ Այս թե ինչի մասին եյինք վիճում Քաղբյուրոյում։ Ճիշտ ե այս, թե վոչ։ Ճիշտ ե։ Այս բոլորը փաստեր են, սրանցից վոչ վոք չի կարող խուսափել իսկ նույն այդ 14-րդ կոնֆերենցիայում արդյոք վիճ ծագեց այն մասին, թե հարկավոր ե այս կամ այն ուղղումը մըտցնել։ Հանդես յեկավ արդյոք ընկեր Կամենելը, կամ քնկ. Զինովիը, և արդյոք նրանք կուսակցությանը նախազգուշացրի՞ն թեքումների վտանգից։ Վհչ այդպիսի յելույթ տեղի չի ունեցել։ Այս փաստը պետք է արձանագրել։ Ինչու, ընկեր Կամենել, դուք այն ժամանակ չասացիք, վոր այս բանաձեւ մի զիջում և կուգակին։ Ինչու դուք և ընկեր Զինովիը, մինչև հարակից ձեր զեկուցումով հանդես գալը, յերգվում եյիք, վոր հավատարիմ եք 14-րդ կուսկոնֆերենցիայի բանաձևին։ Ինչու համար, Այդպիսով ով եր մոլորության մեջ գցում կուսակցությանը—նրանք արդյոք, ովքեր կենինգրազի կազմակերպության կողմից համագումար յեկան իրանց համար պաշտպանության վահան դարձնելով հետեւյալ լողունգները։ «մենք կողմնակից ենք 14-րդ կոնֆերենցիայի բանաձևին, մենք կողմնակից ենք կենտկոմի զծին», իսկ հետո հանդես յեկան հարակից զեկուցումով, թե նրանք, ովքեր վոչ միայն 14-րդ կուսկոնֆերենցիայի բանաձեւ հանեցին, այլև իրանց պարտականությունն են համարում այդ բանաձեւ կիանքում կիրառել վորի մասին վկայում և ընկեր Մոլոտովի հանձնաժողովի աշխատանքը։ Դուք ինչպես վարդեցիք այս գեպըում։ Զեզնից վորնեւ

մեկն արդյոք արագացրեց այդ հանձնաժողովի աշխատանքը. Ընկեր Զինովիլը, ընկեր Կամենելը, կամ Քաղբյուրոյի անդամներից մեկն ու մեկը հաստատեցին արդյոք, վոր ընկեր Մոլոտովի հանձնաժողովը շատ յերկար և աշխատում, սխալ և աշխատում, վոչ վոք այդպիսի հայտարարություն չարավ:

«Հարստացեք» լոգունզը հրապարակ նետվեց 14-րդ կուսկոնֆերենցիայից առաջ: Դրանից հետո, 14-րդ կոնֆերենցիան, վորի հեղինակությունը Բուխարինի խոսքերից տվելի բարձր և, իր խոսքն ասաց այս հարցի մասին, բանաձև հանեց, վորը վոչ մի կասկածի ու մեկնաբանության տեղիք չի տալիս: Ընկ. Բուխարինի լոգունզը այդպիսով արդյոք վարկաբեկվեց 14-րդ կուսակցական կոնֆերենցիայի կողմից: Այս, վարկաբեկվեց:

Արդյոք ճիշտ չե՞ր լինի, յեթե ընկ. Զինովիլը և Կամենել գտյին և ասեյին, մենք պահանջում ենք վոր կոնֆերոնական կոմիտեն այդ լոգունզը վերացնի, թեև նա պաշտոնապես վերացված և Քարտուղարության կողմից: Ընկեր Յարոսլավսկին յերեկ այստեղ հրապարակեց Կենտրոնական Կոմիտեյի վորոշումը: Ձեզ այնպես թվաց, թե մենք բավականաշատ վճռականորեն չվարվեցինք ընկ. Բուխարինի հետ: Դուք կամենում եյիք վոչ թե լոգունզը վարկաբեկել, այլ Բուխարինին: Ահա թե գուք ինչ եյիք ուզում (Զայներ. «Ճիշտ»): Իսկ մենք այդ չեյինք ցանկանում: Մենք կասկածել սկսեցինք, տեսնելով, վոր այն մարդիկ, վորոնք սկզբում պահանջում եյին խաչել մեկին (իսկ մենք, ինչպես ես արգեն մատնանշեցի, ասում եյինք. մի շատապեք խաչ հանել, սխալվել ե, —սխալի համար մենք

հարվածում ենք, չենք խնայում, բայց ինչու անպայման խաչենք), —դրանից հետո, հանկարծ նույն ձևով Բուխարինի վրա յեն հարձակվում:

Սակայն ավելի ճիշտ կըլիներ, յեթե նրանք ասեյին.—մենք պահանջում ենք այս, մենք պահանջում ենք այն, մենք ձեզ հետ համաձայն չենք, հարցը յեկեք փոխազրենք կենտրոնական կոմիտեն—Գերազույն հնստանցիան, թող նա իր կարծիքը հայտնի Կատարվել և այդու վոչ, չի կատարվել Իսկ ի՞նչ և կատարվել դրա փոխարեն: Դրա փոխարեն Լենինգրադի կտօմակերպության մասին սկսեցին զանազան լուրեր տարածել: Իսկ միթե մենք չգիտենք, թե այդ ինչպես է կատարվում: Միթե մենք արգեն չենք տեսել այդպիսի որինակներ: Նախ շշուկներով կասկածանք սերմանիր, ապա վստահությունը խախտիր, ապա վրդովմունք առաջ բեր, իսկ այնունետեւ, համեցեք—հարակից զեկուցումը պատրաստ ե (Մափահարություններ):

14-րդ կուսկոնֆերենցիայից հետո մեր կացությունն ի՞նչ փոփոխության և յենթարկվել: Կատարվել և արդյոք վորեե խոշոր քաղաքական բեկում, ի՞նչ նոր բան և տվել մեզ կյանքը 14-րդ կոնֆերենցիայի և հոկտեմբերյան պլենումի միջանկյալ ժամանակամիջոցում տեղի յենեցել յերկրի քաղաքականության և եկանումիկայի առարեղում:

Այնուամենայնիվ, մի ինչ-վոր բան մենք կալում ենք ընկ. Զինովևի գրվածքներում: Նա հոդված և լույս ընծայում այն ըոպեյին, յերբ Քաղըյուրոյիք

անդամներից վոչ մեկը չկա: Ինչնք ե սկսվումնուա «Դարշաբջանի փիլիսոփայություն» բրոցյուրի սկզբնականընագիրը: Նրանով, վոր յերկիրը թեակոխում և մի ինչվոր նոր շրջան: Յես անգիր հիշում եմ. «Համարյա Փիլիքապես լավում են պատմության քայլերը... Վերջանում ե մի գլուխը, սկսվում ե մի ուրիշ գլուխ»: Ահա այս բանը ընկ. Զինովիկը գրում ե և, այնպես, հարեանցիորեն, առում ե ընկ. Մոլոտովին. «Դուք չեք առարկում, յես այսպիսի բան եմ գրելու և զետեղելու լրագրում»: Յեկ այդ նրանից հետո, յերբ մենք ցանկություն հայտնեցինք, վոր Քաղբյուրոյի պատասխանառուներկայացուցիչների պատասխանառու յելույթների մասին, այս կամ այն ձեռվ, տեղեկություն տրվի Քաղբյուրոյի մյուս անդամներին: Յես հարցնում եմ ձեզ՝ արդյոք ի՞նչ կասեցիք դուք, տեղերում աշխատողներդ, յեթե ստանայիք այդպիսի մի հոդված, վաչ կանոնը, վաչ Բոգուշևսկու հոդվածը, այլ Զինովիի հոդվածն այնպիսի արտահայտություններով, ինչպես՝ «լսվում են պատմության քայլերը», նաև լսում ե պատմության քայլերը, իսկ մենք, Քաղբյուրոյի անդամներս, նստել ենք նրա կողքին և վոչինչ չենք լսում (ծիծառ, ծափահարություններ): Լավ. յեթե դու լսում ես, մենք իրավունք ունենք քեզ հարցնելու. — ի՞նչ ես լսում, ասա (ընդհանուր ծիծառ, ծափահարություններ): Տեսնենք, թե նա ի՞նչ ե լսել: Ի՞նչ ե կատարվել: Բանից դուրս ե գալիս, վոր Ռւսարյալովը Խարբին քաղաքում մի գիրք ե գրել (ծիծառ, ծափահարություններ). անա այստեղից մի ամբողջ «փիլիսոփայություն», վոչ միայն սոսկ փիլիսոփայություն, այլ «դարաշրջանի փիլիսոփայություն» (ընդհանուր ծիծառ, ծափահարություններ): Յեկ այնու-

հետև ընկ. Զինովիկը պատմում ե. վաչ, պարսն Ռւսարյալով, դուք լավ չեք հասկանում մեր ժողովրդին: Յեկ ահա, — գրում ե Զինովիկը. — դուք ուզնում եք իմանալ թե մեր ժողովուրդն ինչի մասին ե մտածում: Ընկ. Զինովիկը հաճախ գործ ե ածում հետեւալ ասացվածքը. յեթե ուզում ես իմանալ՝ ինչի մասին ե մտածում ժողովուրդը, պետք ե ականջդ գետնին գնես: Հստ յերեւույթին նա իր ականջը դրել ե գետնին (ծիծառ) և լավ ե իմանում, թե ինչ ե մտածում մեր ժողովուրդը. վմբն ե ժողովրդի այդ մտածմունքների գլխավոր, հիմնական իդյան: Ինչպես յերեւում ե — հավասարությունն ե: Յես հարց կըտամ ձեզ, տեղերում աշխատող ընկերներ. այդ լոզունգը, այն ձեռվ, ինչպես ընկ. Զինովիկն ե առաջադրում (վոչ թե իր ամբողջ ծավալով, ինչպես հավասարության հարցն իլյիչն ե գնում, ինչպես մեր ամբողջ կուսակցությունն ե գնում, յերբ ասում ե, վոր մեր աշխատանքի ամեն մի որը, ամեն մի ժամն այն ճանապարհն ե, վորը տանում ե գեղի լիակատար հավասարություն, յերբ, յենթագրվում ե, այլև չեն լինելու դասակարգեր, դասակարգերի ներհակություններ, յերբ չի լինի վարձու աշխատանք, — կրկնում եմ, վոչ այս ձեռվ վերցրած, այլ միայն մեր տվյալ շրջանի, ներկի շրջանի պայմանների տեսակետից մոտենալով այդ հարցին), — հավասարության այդ լոզունգը, այդպես ընդհանուր ձեռվ վերցրած, կարող ե արդյոք նպաստել, վոր մեր կուսակցությունն իր աշխատանքների համար ավելի ճիշտ ուղիներ գծի: Վաչ, չի կարող նպաստել:

Մեր պայմաններում ի՞նչ բան ե հավասարության ցանկությունը: Յեթե այդպիսի ցանկություն դոյւ-

թյուն ունի, ապա ովքե՞ր են այդ ցանկությունն ունեցողները, նախ և առաջ, այդպիսի ցանկություն կազմողի ներսում, գյուղացության առանձին խմբերի մէջ: Զքավորն ունի այդպիսի ցանկություն: Զքավորը, հասկանալի յե, կասի. յես հավասարություն եմ ուզում, յեկեք բաժանենք: Կուլակը, նույնպես, հավասարություն եւ ուզում, միայն ուրիշ մտքով: — նա ուզում եք քաղաքական հավասարություն ունենալ, ինչպես բանվորները, կարող եք դուք նրան այդպիսի հավասարություն տալ: Վաչ, չեք կարող:

Բանվորները ևս հավասարության ցանկություն ունեն: Որինակ՝ ցածր վորակի բանվորներն ուզում են հավասար լինել ավելի վորակյալ բանվորներին, վորոնք ավելի լավ վարձատրություն են ստանում: Իլրանք աշխատավարձի հավելում են ուզում՝ վորակյալ բանվորներին հավասար:

Այդ լոգունը կուսակցությանը ի՞նչ որինտացիս յե ցույց տալիս, ի՞նչ ուղղություն ե տալիս կուսակցության գծին—ճիշտ, թէ սիսալ (Զայներ Տեղերից «Սխալ»): Այս, ընկերներ, սիսալ:

Այդ գեպքում արդյոք ճիշտ վարվեցին ընկ. Մոլոտովը և մյուս ընկերները, վորոնք ընկ. Զինովիկին խորհուրդ ավին այդ ձեռով հոգված չտապել: Ճիշտ վարվեցին, ի հարկե: Նրանք ուղղումներ մացրին «Պատմության քայլերի», հավասարության հարցում, լրցում արին միջակի հարցում: Նրանց մտցրած այդ ուզումները ճիշտ են: Անկասկած ճիշտ են: Այդ նրանք բերում են վորպես խոշորագույն տարածայնություններից մեկը.—իբր մենք ճնշում ենք, գործողության ազատություն չենք տալիս: Բայց ահա և մի այսպիսէ

մեթոդ. «Թանկապին առաջնորդներից» վորևե մեկը նստած իր առանձնասենյակում վորևե բան ե լսում, իր պաշտօնակից ընելներին նա վոչինչ չի ասում, այլ ուղղակի դիմում ե կուսակցությանը, հրամարակ ե նետում չստուգված, քննության չենթարկված լոգունգ, — և այդ կոչվում ե կոլեգիալ աշխատանք: Վահ, այդ կոլեգիալ աշխատանք չե: Այդ մի փորձ ե, ցանկու, թյուն ե, ձգումն ե աշխատել առանց կոլեգիայի, զանցանելով կոլեգիային, առանց խորհրդակցելունը հետ: Յեկ ահա թե ինչպիսի արդյունքներ են ստացվում:

«Խարացրջանի փիլիսոփայություն»-ը լույս տեսնելուց հետո հարաբերությունները սրվում են ընկ. Կամենեկի հոգվածի և ճառի առթիվ արված ուղղումների պատճառով: Խոկ յես կասեմ. ուղղումներ արված են, բայց փոքր չափով, հարկավոր եր ավելի լավ և խոր ուղղումներ անել մասնավորապես այն հարցի վերաբերմամբ, թե բանվորները ձեռնարկությունների վաստակից բաժին պետք ե ստանան: Ճիշտ ե, արդյոք այդ լոգունգը, վորն ընկ. Կամենեկը բացատրում ե մի ինչ-վոր յերեխայական ձևով: յես, ասում ե նա, «Ընդհանրապես» եմ ասել իմ միտքն եմ արտահայտել: Ընկեր Կամենեկ, ձեր խոսքերն ավելի մեծ ուշադրությամբ են լսում, քան ընկ. Բողուշակու խոսքերը: Հասկացեք, վոր տեղերում ձեր խոսքերն իսկույն ևեթ գործնական մտքով են հասկանում: Յես կամ ընկ. Կալինինը կարող ենք ձեր ճառը հարևանոցուն կարդալ բայց տեղերում ձեր ճառը կարգում ե զազգյահի բանվորը և հասկանում ե իրեն հատուկ գործնական ձևով: Ի՞նչ ե, այս լոգունգն ընկ.

Կամենել իրենից և հնարել թե մեկից լսել եւ Այս, ընկերներ, կամենել լսել եւ Կմ արդյոք այդպիսի ձգտում: Կա: Ո՞վ ունի այդպիսի ձգտում—բանվոր դասակարգը, վորապես դասակարգ, թե բանվորների առանձին կատեգորիաները. Բանվորների վոր կատեգորիաներն ունեն այդ ձգտումը: Նրանք, ովքեր աշխատում են ոգտարեր արտադրական ձեռնարկություններում: Իսկ Դոնբասսի բանվորներն այդպիսի մտքեր ունեն: Վաչ, այստեղ ոգուտի մասի չեն մտածում: Ճիշտ ե, արդյոք, այդ լոգունը, մինչև իսկ իրեն դիմակամուն լոգունդ: Վաչ, ճիշտ չե: Ապա ինչո՞ւ ընկ. Կամենեից մենք չենք պահանջում, վորպեսզի նա բարձրանա այս ամբիոնը, կամ ուրիշ վորեւ ամբիոն, կամ հանդիս գա լրագրում և հրապարակով ասի. — յես սխալ լոգունդ առաջարեցի, առանց խորհրդակցելու իմ պաշտոնակիցների հետ, և այդ սխալ եր արդյոք: Յես առաջին անգամն եմ շոշափում այս հարցը: Ապա ինչո՞ւ «Հարստացեք» լոգունդի առթիվ հարկավոր յեղավ, վոր ընկ. Բուխարինն այդ լոգունը վոչ միայն յետ վերցընի, այլ և ուրանա, յերեք անգամ ուրանա, ինչպես Պետրոսը Քրիստոսին (ծիծաղ): Կայացավ քարտուղարության վորոշումը և ընկ. Բուխարինն այդ լոգունդից մի անգամ ել Մոսկվայի կոնֆերենցիայում հրաժարվեց, մի անգամ ել—համագումարում,—բայց և այսպես ամբողջ խաղը շարունակվում ե այդ լոգունդի շուրջը, այդ բառի շուրջը: Ճիշտ ե արդյոք այդ, վաչ,

Իսկ այդ բոլորին ի՞նչ ե հաջորդում: Արան հաջորդում ե Կանտկոմի հոկտեմբերյան պլենումը: Այդ պլենումում մենք բանաձև ենք ընդունում միաձայն:

Յես պնդում եմ, վոր վոչ ընկ. Զինովիե, վոչ ընկ. Կամենել ե վոչ ել մի ուրիշը չեն Ժխտի այն փաստը, վոր ընկ. Մոլոտովի առաջադրած բանաձեի մեջ իրենք վոչ մի փոփոխություն չմտցրին: Այս փաստ ե, թե վոչ, Փաստ ե: Արդ՝ վմբն ե այստեղ կուլակի և զյուղում տեղի ունեցող դասակարգային պայքարի քողարկումը: Վմբն ե այստեղ կուլակային թեքումը և այլն:

14-րդ կուսկոնֆերենցիայից բանաձեկց հետո ե կենտկոմի հոկտեմբերյան պլենումից չքավորության վերաբերյալ բանաձեկց հետո, ձեզ համար արդյոք պահրզ ե, թե կուսակցությունը գյուղի վերաբերմամբ ինչ քաղաքականություն ե վարում: Պարզ ե: Բայց ահա, ինչպես յերկում ե, այդ քաղաքականությունը բոլորի համար պարզ չե: Հարկ յեղավ, վոր վոմանց համար նորից լուսաբանվի այդ քաղաքականությունը: Յեվ ահա լույս ե տեսնում «Կապույտ թղթապանակ»-ը*), ինչպես նա այժմ կոչվում ե: Այդ թղթապանակի յերեսին գրված ե. — «Նյութեր կուսակցության՝ գյուղի վերաբերյալ դասակարգային քաղաքականության հարցի մասին, վորոնք հրապարակված են կուսակցական մամուլում, սկսած 14-րդ կուսկոնֆերենցիայից մինչև կենտկոմի հոկտեմբերյան պլենումը»: Այդ թղթապանակը լույս ե տեսել Հոկտեմբերյան պլենումից հետո: Նրա առաջին մասի բովանդակությունը հետեւյալն ե. — «Բուխարինի, Սլեպկովի, Բոգուշակու և ուրիշների գիրքը» (արտատպահ և գրամեքենայով): Այստեղ է Բուխարինի հոդվածը «Հարստացեք» լոգունգով. այստեղ են Սլեպկովի, Բոգուշակու, Կանտորի և ուրիշների հոդվածները: Ահա այդ հոդվածներն արտատըպ-

*) Синяя папка.

ված են և նրանց կցված են այնպիսի փոքրիկ անլեգալ ծանոթություններ, ինչպես, որինակ.—«այստեղ տպված Բուխարինի յերկու հոդվածները նրա ճառերն են, վոր նա արտասահնել և Մոսկվայի կազմակերպության ակտիվ աշխատակիցների ժողովում»։ Այս, ինչպես տեսնում եք, խիստ գաղտնի մի փաստաթուղթ ե։ Այնուհետև առանձին թղթի կտորի վրա գրած ու կպցրած ե հետեւյալ փոքրիկ ծանոթությունը։

«Այստեղ Բուխարինը ժխտում է Լենինին, պատասխանը տվել է Զինովեև իր «Լենինիկմ» գրքի այն գլխում, վորի վերնագիրն ե։ «Հնարավոր ե արդյոք, վոր սոցիալիզմը վերջնական հաղթություն տանի մի յերկրում»։

«Դիալեկտիկայի կատարյալ բացակայություն։ Կոռպերացիան գնում ե սոցիալիստական ուղիղով և տալիս մանր բուրժուական տարրեր։ Մրանք են կոռպերացիայի աշխատանքի դժվարությունները»։


Բոլոր ծանոթությունները յես չեմ կարդա։ Մի ծանոթություն զետեղված ե մինչև իսկ Լենինից բերված ցիտատի հանդեպ։ Նրա դիմաց կպցրած ե այսպիսի մի ծանոթություն։ «Կուլակի դերի կոծկումը»։

Ո՞վ ե «Կապույտ թղթապանակի» հեղինակը։ Լենինիքաղի կոմյերիտմությունը։ Ո՞ւմ ե ուղղված։ Ռայոնական կոմետեներին՝ 30—40 որինակով։ Ահա թե կոմյերիտմությունը Լենինգրադին ինչպես ե իրազեկ դարձնում, թե կուսակցությունը զյուղում ինչ քաղաքականություն ե վարում կենտկոմի հոկտեմբերյան պլենումից հետո։ Ճիշտ ե այս վայս սխալ ե։

Ընկ. Կուլինը Լենինգրադի համագումարում այդ բանը բացատրեց շատ հասարակ ձևով։ Թաղ նա այս

համագումարում ևս այնպես բացատրի։ «Դե մեր տըղերքը ջահել են, արտատպել են, դրամ են հավաքել և դորկել են ծանոթացներու համար»։ Մենք գիտենք, թե ինչ ե նշանակում այդ «ծանոթացնելը»։ Ահա ձեզ «ինքորմացիա այն մասին, թե կուսակցությունը դյուզի վերաբերմամբ դասակարգային ինչ քաղաքականություն ունի», —ինքորմացիա, վոր արգում ե Բոգուշեկու, Կանառը, Սլեպկովի հոդվածներով։ Ի՞նչ ե նըշանակում այս Այս նշանակում ե սխանիքն ուղցնել։ Դուք սխալ եք վարգում, վոր յերիտասարդությանն այդ հոդվածներով եք սովորեցնում։ Ինչո՞ւ համար եք գուք այդ անում, —հարցնում եմ ձեզ։ Այդ նշանակում ե, վոր յեթե մինչև այժմ գուք քչփշում եյթե կասկածանք սերմանելոց համար, այժմ արդեն անցնում եք վստահությունը խախտելու գործին։ Ո՞ւմ վստահությունը։ Կենտկոմի իհարկե և վոչ թե Սլեպկովի, կամ Բոգուշեկու։

Մենք տեսնում ենք այդպիսի գործիքների կիրառումը, վորոնք վտանգավոր են, վնասակար են թե նրա համար, ով իր ձեռքն ե վերցնում այդ գործիքները և թե ամբողջ կուսակցության համար, —այնպիսի գործիքների կիրառում, ինչպես կոմյերիտմությունը լենինյան կենտկոմին և նրա լենինյան խըմբակին հակադերու փորձը, մենք տեսնում ենք կապույտ թղթապանակներ, մենք տեսնում ենք, վոր փորձեր են արգում կոմյերիտմության լենինգրադի կոնֆերենցիան համառուսական կոնֆերենցիանցարձնելու։ Այդպիսի բան յեղել է, թե վեցամյակ Յեղել ե։ Թե, զուք կրկն կասեք, վոր այդպիսի թղթին չեն յեղել յերբ արգեն հաստատված ե, վոր տասնունինինդ, թե քան հե-



ուազիր և ուղարկված կազմակերպություններին, մինչև իսկ Ռւզբեկստանի կազմակերպությանը։ Այդ հեռագրերի բովանդակությունն եւ—Յեկենք մեր համագումարը։ Կենտկոմում տեղի ունեցած տարածայնություններից հետո, մենք կրկին անգամ նրանց բռնեցինք, մենք ասացինք, վոր հարկավոր չի ուղացնել այդ խառնաշխությունը (ԵԿԼՕԿԱ), չի կարելի կոմյերիտմիության լենինգրադի կոնֆերենցիան դարձնել համառուսական կոնֆերենցիա, չի կարելի լենինգրադը պայքարի կենտրոն դարձնել, Յեկ ում դեմ Դուք կարծում եք՝ մենք չենք հասկանում, թե ում դեմ։ Մենք միայն ցույց ենք տալիս, թե չենք հասկանում։

Բայց ընդունում ենք, վոր Կոմյերիտմիությունը սխալվել եւ Հարկավոր եր խատորեն՝ բայց եկել կորեն անել այն, ինչ վոր պետք եւ անել այս բոպեյիս։ Իսկ մենք ինչ ենք անում։ Մենք նորից վտանգավոր զենքը խում ենք, ինչպես յերեխայի ձեռքից, և ասում ենք։—այդպես չի կարելի, մենք նկատում ենք։ ցած զրեք, հարկավոր չե (ծիծաղ)։

Ահավասիկ, «կազմակերպչական ձնշման այն դաժան միջոցները, վոր Քաղըյուրոյի մեծամասնությունը գործ եր դնում փոքրամասնության վերաբերմամբ (ճափահարություններ)։ Այս ինչ ե ցույց տալիս, վոր մենք մեղմ ենք վարդում։ Յեթե կա մի բան, վորի համար կարելի յե մեկ կշտամբել այդ մեր մեղմությունն ե (Զայներ. «Ճիշտ ե», Ծափահարություններ)։ Ամբողջ ժամանակ մենք զբաղված եյինք նրանց հետ, ինչպես մի յերեխայի հետ, վորը դանակ և վերցրել իր ձեռքը։

Արդ, կուսակցական լենինյան միասնականու-

թյան տեսակետից, ճիշտ վարվեցինք մենք արդյոք։ Այն, ճիշտ վարվեցինք, վորովհետև մենք հետապընդում եյինք միմիայն մի նպատակ—միասնականություն պահպանել, ինչ կերպ ել վոր լինի։

Տեսէք, ձեր փոքրիկ սխալները մեր աչքից չեն խոսափի, նրանք մեղնից չեն կարող թագնվել, վորովհետև յերբ այստեղ խոսում են լենինիստների մասին, չե վոր, ընկերներ, մենք նույնպես լենինիստներ ենք, լենինից վորոշ բան սովորել ենք և քիչ անգամ չենք հարգածներ ստացել նրանից, ինչպես բոլոր մյուսները և մենք գիտենք, թե ինչից են սկսվում նման վտանգավոր բանները։ Սակայն մենք պաշտպանում եյինք լենինիստների միասնականությունը, մենք չեյինք ուղղում բորբոքել տարածայնությունները, վըտանգավոր զործիքները խլեցինք ու մի կողմ զրինք, ում ձեռքին գտնվում եյին այդ զործիքները, նրանց վզակոթին խփեցինք, իսկ այդ զործիքները ավողների վերաբերմամբ ձեւցրինք, թե իր չենք նկատում։

Այսուհետեւ, ահա, զալիս և ընկ. Զինովիեի խմբակը (Կրյաօք), լենինգրադի ամենաբարձր տիպի խըմբակը, վոր ինքը Զինովին եր զեկավարում։ Այս բանից հետո յերբ լենինգրադի ընկերներին մենք ակնարկ արինք, թե նման խմբակի գոյությունը միանգամայն անհարմար ե, —խմբակ, վորի ժողովներին հըրավիրվում եյին հատուկ ցուցակներով, հատուկ լիազորների միջոցով, —և նրանց ասացինք, վոր հարկավոր և ցըել այդ խմբակը, նրանք համաձայնեցին և խմբակը ցըվեց։

Զալուցին այստեղ ամբիոն բարձրացավ և խոսեց այն մասին, թե ինքն ինչ լավ տղա յե։ Ով չի

իմանում, Պյատը, վոր դու լավ տղա յես. հվ չգիտե՞
վոր Զալուցկին նվիրված ե հեղափոխությանը, վոր
նա հեղափոխական ծառայություններ ե մտառուցել
վոր նա մեր լավագույն կուսակցական բանվորներից
մեկն եւ Այդ տեսակետից մենք քեզ գովում ենք,
Պյատը: Բայց վոր դու այդ պատմությունով հրապուր-
վեցիր քեզ հատուկ անկեղծությամբ ու պարզությամբ,
գու ավելի բարձրածայն ասացիր այն, ինչ վոր ուրիշ-
ները կամացուկ ելին ասում, դրա համար մինք քեզ
մի լավ գղեցինք:

կասկածանքի անվստահության սերմեր ցանվել
են արդյոք։ Այն, ցանվել են։ Սխալներ յեղել են։ Այն,
կազմակերպչական փորձեր յեղել են այդ
յեղել են։ Կազմակերպչական փորձեր յեղել են այդ
սխալները հիմնավորելու համար։ Այն, յեղել են։ Կենտ-
կոմը դրա համար հարգածեց։ Փաստ ե, վոր Հարգա-
ծեց. այդ մի փաստ ե, վորից անհնար ե խուսափել։
Եվ յերբ գործը հասավ այն բանին, վոր Զալուցին
— Լենինգրադի կազմակերպության քարտուղարը, — իր
կարինետում, — վոչ թե մի բաժակ թեյի վրա այլ գոր-
ծի ժամանակ, — սկսում ե իր մոտ ժամանած ընկերոջը
պատմել այն մասին, թե կենտկոմը վերածնվում ե, —
Պյոտրին արդարանում ե, Այնպես ե զուրս գալիս, վոր,
իրը, նա խոսել ե վոչ թե ընդհանրապես կենտկոմի դեմ,
այլ միայն Ստալինի դեմ, Մոլոտովի դեմ, Բուխարե-
նի դեմ և այլն։ Ինչպես առածն ասում ե. «Եշը չե,
պոչն ե» (ծիծառ)։ Նրանք ասում են։ — «Մենք դեմ
ենք, իրը, վոչ թե կենտկոմին, այլ անվանական կենտ-
կոմին։ Կենտկոմի անդամներն, իրը, կենինյան ոեցլսե-
րից եծեւ, կուլակային թեքում են ցույց տվել այս-
պիսով մենք կընանդենք տերմիորին»։ Այն բանից

հետո, յերբ այդ պարզգեց և Պյոտրը չկարողացավ այդ ժխտել, կենինգրազգիների հետ զրուցելիս նրանք բարորը մեզ ասում ելին, վոր Զալուցկուն պետք է հեռացնել: Զալուցկուն հեռացը եք: Ում համաձայնությամբ: Չեր համաձայնությամբ: Այս փաստ ե, և այդ բանից հետո ասում են. Կենտկոմը կազմակերպչական ճնշում է գործ դնում: Դուք ինքներդ վորոշեցիք, վոր չի կարելի Զալուցկուն թողնել քարտուղարի պաշտոնում: Նրան հեռացը ինք ձեր համաձայնությամբ: Յեզ ձեր համաձայնությունը տալուց հետո դուք նորից գնացիք ձեր բանվորների մոտ, ձեր կուսակցական կազմակերպության մոտ և սկսեցիք անմեղ ձևանալ և ասել. — հիվանդության պատճառով, անհայտ ե, թե ինչու համար, հեռացնում են Զալուցկուն (Ծիծաղ): Այս բնչ բան է: Արդյոք այս ազիտացիա և պրոպագանդ ե Կենտկոմի վստահությունը և հեղինակությունն ամրապնդելու ոգտին, թե այստեղ ևս կասկածանքի ու անվստահության սերմեր են ցանում: Իսկ յերբ դուք սկսեցիք համագումարի համար նախապատրաստական կամսպանիա կիրառել, ձեզնից և վոչ մեկն այնքան քաջություն և ուղղամտություն չունեցավ կենինգրազիք կոմմունիստների մոտ զալու և ասելու. — կենտրոնական Կոմիտեյի հետ մենք տարակարծիք ենք այս և այս հարցի վերաբերմամբ. կենտրոնական Կոմիտեյին մենք մեղազրում ենք, վորովհետեւ նա հաստատուն քաղաքական զիծ չունի, վորովհետեւ նա կազմակերպչական ճնշում է գործ դնում, — մի խոսքով, դուք քաջություն չունեցաք ասելու այն ամենը, ինչի մասին այստեղ խոսեց ընկ. Զինովես: Վաչ, դուք այդ չասացիք, վորովհետեւ անհայտ եք, թե համագումարի ընտ-

բություններն այն ժամանակ ինչպես կանցնին լենինգրադի կազմակերպություններում (Զայներ. «Ճիշտ ե»: ճափահարություններ):

Այն ժամանակ գուք հագել եյիք կենտկոմի՝ պաշտպանողական գույնը և համագումարի անդամ ընտրվեցեք՝ «Ի հարկե, մենք կենտկոմի կողմանակից ենք» լոգունգի շնորհիվ:

Յես ինձ թույլ եմ տալիս յերկու խոսքով շոշափել կենտկոմի վորոշումը, լենինգրադի կազմակերպության մասին, վորը տպված ե լրագրում։ Այդ վորոշումը լենինգրադցիները համարում են գերազանցապես սխալ Գործը լսվում եր կազմբյուրոյում։ Զալուցին թույլ գեկուցում տվեց, Ընկ. լենինգրադցիներ, ճիշտ ե այս, թե վոչ։ Այս, թույլ գեկուցում տըվեց Զալուցին։ Դրանից հետո, յերբ գեկուցման և ունեցած տվյալների հիման վրա կազմբյուրոն իր վորոշումը հանեց, կայացավ Քարտուղարության նիստը լենինգրադցիների մասնակցությամբ։ Յեվ ինչ ասցին այդուհեղ լենինգրադցիները։ Նրանք ասացին։ Մենք այնպիսի տպավորություն ստացանք, վոր Զալուցին չկարողացավ զեկուցում տալ չկարողացավ ասել՝ ինչ հարկավոր եր, նա այն թվերը չըբրեց, վոր պետք եր, մեր ձեռքի տակ ուրիշ թվեր կան ևայլն։ Ահա, թե նրանք ինչ ասացին քարտուղարի մասին։ մենք շատ լավ քարտուղար ունենք, սակայն յերբ հարկ յեղագ զեկուցում տալ կենտկոմին, նա սխալ թվեր բերեց, չկարողացավ այդ թվերը բացատրել ուստի ստացվեց այսպիսի բանաձև։ Յեվ այդ բանից հետո գուք զարմանում եք, թե ինչու այլպիսի լավ քարտուղարին հեռացրին։ Նրան հեռա-

ցրին «հիվանդության պատճառով», ինչպես գուք բացատրում եք լենինգրադի կազմակերպությանը։ Դրանից հետո գուք ուրիշ թվեր ներկայացրիք, — ձի՞շտ եայս, թե վոչ։ Ճիշտ ե, Ումից պետք ե նեղանալ, Զեղնից նեղացեք, ընկերներ։ Այդ բոլորը տեղի ունեցավ վոչ այն պատճառով, վոր Զալուցին չեր կարողանում դիկուցում տալ Մենք գիտենք, վոր նա, հարկ յեղած գեպքում, կարող ե վոչ միայն զեկուցում տալ այլ և տեղորեմիկ զեկուցումներ գրել։ Ճիշտ ե, մեզ համար, և նրա համարել ել, լավ կըլիներ, յեթե նա բրոցյուրներ ամեններն չգրեր։ Բանն այն ե, վոր գեռ այն ժամանակ, լենինգրադի կազմակերպությունը կենտկոմի մասին այսպիսի մի կանխակալ կարծիք ուներ։ — առջին մենք մի վորևե կալուգա, կամ Տուլա^{*)} չենք, վոր ընդհանուր կարգով զեկուցում տանք, և յերկրորդ ինչ ել վոր պատմես կենտկոմում — նա կասի լավ ե։ Իսկ կենտկոմը լենինգրադի կազմակերպության մասին նույն կերպ եր զատում, ինչպես մյուս բոլոր կազմակերպությունների մասին։ Ձեր կարծիքով, կենտկոմը պետք ե մատնանշեր, թե լենինգրադի կազմակերպությունն ինչ վոր ասում ե, բոլորը լավ ե։ Իսկ զեկուցման առթիվ կատարված այդ յելութից հետու յերկու թե յերեք գեպք պատահեց կոմյերիտականների հետ ևայլն՝ յերբ հաստատվեց, վոր Սաֆարովի զեկավարությունը կոմյերիտամիտության վերաբերմանը անբավար ե և վոր հարկավոր ե նրան հեռացնել և ուրիշ աշխատանք հանձնել։ Միթե մենք պետք ե առվելի զիջողաբար վերաբերվենք զեկուցմանը։ Վաչ, ընկերներ, այդ զեկուցման մեջ լենինգրադի կազմակերպության դեմ հարձակումներ չկան։

^{*)} Քաղաքներ։

Կրկին խոսենք տարածայնությունների ընթացքի մասին։ Յես հարցնում եմ ընկ։ Կամենեին, — թեև համոզված եմ, վոր ընկ։ Անդրեևը, վորն ինձնից հետո հանդես ե գալու, ավելի մանրամասնորեն կանգ կառնի այս հարցի վրա, — բայց և այնպես հարց եմ տալիս։ — միթե համագումարից մի յերկու որ առաջ մենք փորձ չարինք համաձայնության գալ ընկերաբար։ Չե՞ վոր մեզ համար, թե մեկ և թե մյուս կողմի համար, հավասարապես ծանր ե կովել և այդ վոչ միայն շնորհիվ մի շարք որյակախվ պատճառների, այլ և նրա համար, վոր մենք տեսնում ենք, թե այդ ինչպիսի վտանգ ե սպառնում կուսակցությանը։ Ահա թե ինչու մենք այդչափ մեղմ վերաբերվեցինք, յերբ դուք խաղում ե-յիք սուր գործիքների հետ, — մենք գիտեյինք, վոր այդ կըտանի ղեպի ֆրակցիոն կոփ։ Ահա սրա համար մեղմ վերաբերվեցինք և վոչ թե այն պատճառով, վոր մենք տասնյակ տարիներ միասին ենք աշխատել։ Միթե մենք համագումարից հետո փորձ չարինք այս հարցերը խաղաղ ճանապարհով լուծելու։ Միթե չասացինք՝ յեկեք զիջումներ անենք, յեկեք գտնենք տարածայնությունների պատճառը։ Սակայն ինչի՞ համար մենք գժավեցինք ընկ։ Կամենեի հետ վոր հարցում մենք համաձայնության չեկանք։ Դուք կարծում եք կուլակի՞ հարցում, պետական կապիտալիզմի՞ հարցում մենք համաձայնության չեկանք։ Քաղբյուրոյի չորս անդամը՝ մի կողմից և կամենեն ու Զինովիել՝ մյուս կողմից, համաձայնության չեկան, դուք կարծում եք՝ նեպի՞ հարցում։ Վո՞չ, մենք համաձայնության չեկանք Սափառովին և Սարգսին ցույց տրվող վերաբերմունքի հարցում։ Ահա թե վո՞ր հարցում մենք համաձայնության

չեկանք։ (Զայներ. «Ամբթ»)։ Մենք պահանջում ենինք, և ճիշտ եյինք պահանջում, — վոր վերջ տրվի ներկուսակցական թյուրիմացությունները բորբոքելու քաղաքականությանը, մեծ հրդեհի քաղաքականությանը, հրդեհ, վորն ավելի ուժեղ թափով ընդգրկեց, այսպես կոչված՝ «Զախերին» (նրանց այդպես անվանեց ընկ։ Կամարովը, — այդ իմ խոսքը չե), Յերբ այդ հրդեհը բոնկիցեց, ընկ։ Զինովի, յերկան յեկան «Զախերիը», իսկ դուք մնացիք արդեն էենինզրադի կազմակերպության ոպպորտունիստների շարքերում։ Մենք պահանջեցինք այդ «Զախերին» դատապարտել ձիշտ ե, թե սիսալ (Զայներ. «Ճիշտ ե»), իսկ դուք դրան չհամաձայնեցիք։ Այսպիսով մեր մեջ տարածայնություն առաջ յեկավ վո՞չ կուլակի հարցի պատճառով։

Իսկ Քաղբյուրոյի կազմը փոփոխության յենթարկելու փորձը։ Այս մասին առաջարկություններ յեղել են, Յեղել են — Կամենեի և Զինովիի կողմից։ Այս Քաղբյուրոն նրանց յետելից չի գնում, նշանակում ե՝ հարկավոր ե ուրիշ Քաղբյուրո ստեղծել։ Ի՞նչ ձեռվ, իհարկե, վոչ թե ուղղակի վերընտրելով, այլ ընդլայնելով, այսինքն՝ լրացնելով։ Մենք գիտենք, թե այդ ինչպես ե կատարվում։ Այդ կատարվում ե կամ կազմը փոխելով, կամ լրացնելով։ Այդպիսի առաջարկություն յեղել ե։ Մենք ինչպես վերաբերվեցինք դրան։ Մերժեցինք և ուրիշ վոչինչ (ծիծալ, ծափահրություններ. «Ճիշտ ե»)։

Այժմ մեզ մոտ են գալիս, այսուել և սկսում են պատմել դեմոկրատիայի մասին, ձնշման մասին, և այլն, Ընկերներ, մենք զիտենք, վոր հին ժամանակ, յուրաքանչյուր միջակ բուրժուատ, անպայման ուղում

եր իր վորդուն գոնե մի քիչ լատիներեն սովորեցնել, մտածելով՝ թե իրը լատիներենը մարդուն զարդարում է: Մի փոքր դեմոկրատիան միշտ զարդարում է ոպպողիցիայի շարքերում գտնվող բարձրաստիճան պաշտոնյային (ծափահարություններ): Այդ և ամեն մի ոպպողիցիայի տրամաբանությունը: Տեսէք, ընկերներ, թե ինչպիսի ձանձրալի ձեռվ կը կնվում ե այդ: Շատ ժամանակ և անցել այն որից, յերբ Զինովեն ու Կամենսկ մեղ ամենահիմաստուն, ամենաբայլ կիկյան և Լենինյան ճառեր եյին ասում կառավարող կուսակցության Փրակցիոն պայքարի վտանգավորության մասին: Մենք նրանցից լսեցինք «յերանգավորությունների», «խմբավորութների» վտանգավորության մասին, պերմանենտ դիսկուսիայի վտանգավորության մասին: Լսեցինք, արդյոք մենք այդ բոլորը: Այս, լսեցինք: Դուք հիշում եք, Զինովեն ինչպես եր պատմում այդ «յերանգավորութների», «դիսկուսիաների», «խմբավորութների» մասին: Իսկ այժմ ինչ են ասում նրանք: Ստեղծված դրությունից գուրս գալու միակ յելքն ե, — ասում են այժմ նրանք, — վերջացնել համագումարը, բանաձև ընդունել, իսկ մնացած հարցերի մասին դիսկուսիա բանալ հետեւալ համագումարին: Ե, շնորհակալ ենք ձեզնից, (ծիծաղ, ծափահարություններ): Ցիթե ուզում եք, վորպեսզի վոչ մի կասկած չլինի, մենք հայտարարում ենք, վոր այդ հարցում մենք մնում ենք հին տեսակետին (ծափահարություններ):

Յես ուզում եմ մի յերկու խոսք նվիրել, հատկապես այն հարցին, վոր այստեղ մի քանի հոկտեմբեր հրապարակ նետեցին, թե գուք, իրը, Սարգսի սիսակներին, վորոնք, իրը թե, մինչև իսկ գոյություն չու-

նեն, ավելացնում եք հետեւյալ սարսափելի խոսքերը: Վաղուց ե, ինչ «մենք» սկսել ենք վախենալ բանվոր դասակարգից: Այս խոսքերը նույնպիս մեղ են վերագրում: Այստեղ ընկերներն այնպիսի պերճախոս կերպով արտահայտվեցին նաև դժվարությունների մասին ու մեղ հանդիմանեցին, մատնանշելով, թե այդ դժվարությունները մենք թերագնահատում ենք:

Մենք դժվարությունները տեսնում ենք յուրաքանչյուր քայլափոխում և ամեն որ, վորովհետև նըրանք բոլորը կենտրոնանում են Քաղըյուրոյում, ինչպիս մի փոկուսում: Կարիք չկա դժվարությունների մասին մեղ պատմել: Լենինգրադցի ընկերներից պակաս չգիտենք մենք այդ դժվարությունները և նրանց հետ միասին արձանագրում ենք այդ դժվարությունները: Այդ դժվարությունները հաղթահարելու համար, մեր պայմաններում, ինչ պիտի անի խոշոր միլիոնանոց մի կուսակցություն: Բանվորների ակտիվությունն աճում է, աճում ե նաև նոր խավը: Անցյալ տարի նոր խավն աճեց 20 տոկոսով, և այս տարի, միջին հաշվով — նույնպես 20 տոկոսով: Արդ՝ ինչ անենք, բանանք արդյոք կուսակցության դռները և նրան դարձնենք փխրուն ու կրինք դժվարությունների դեմ, յերբ գոյություն ունի «խմբավորութներ», «յերանգավորութներ», — այդպես եք դուք յենթադրում:

Նադեժնա կոնստանտինովնա կրուպսկայային մենք բոլորս ճանաչում ենք և շատ ենք զնանատում հնագույն կուսակցական աշխատավորի: Մեզ վորպես հնագույն կուսակցական աշխատավորի: Մեզնից վոչ մեկը, հարկավ, այնպես չգիտե լենինի կենսագրությունը, նրա ամբողջ կյանքը, ինչպես Ե. Կ. կրուպսկայան: Նա ունի կուսակցական մեծ փորձ,

բայց այդ փորձից նա խսկագես անհրաժեշտ քիչ գիտելիքներ և ձեռք բերել գործնական կյանքի համար: Յեվ ինչու նա համագումարում չասաց, վոր կուսակցության աճման մասին լենինը վորոշ կարծիք ուներ: Ինչու լենինի ինստիտուտի նախագահ ընկ. Կամենել նույնպես վոչինչ չասաց այդ մասին:

Թույլ տվիք ինձ այստեղ կարգալ յերկու փաստաթուղթ, վոր ընկ. լենինը գրել ե 1922 թվին՝ 11-րդ կուսակցության առաջ, յերբ կուսակցության առջև հսկայական դժվարություններ կային: Լենինն այդ դժվարությունները տեսել ե և կուսակցության կազմը վորոշել ե այդ դժվարությունների տեսակետից: Տեսնենք, թե ինչ ե տաել լենինը:

Յես կարգում եմ.

ԺՈՂԿՈՄԽՈՐՉԻ ՆԱԽԱԳՍԴԻ ԲԼԱՆԿԸ, ՀԱՍՑԵՑԱԳԸՐՎԱԾ ԸՆԿ. ՄՈԼՈՏՈՎԻՆ

«Խնդրում եմ Կենտկոմի պլենում մտցնեք իմ հետեւյալ առաջարկը.

Յես չափազանց կարեոր եմ համարում կուսակցության մեջ նոր անդամներ. ընդունելու համար պահանջվող ստաժի ժամանակամիջոցը յերկարացնել: Զինովել ստաժը վորոշել ե՝ բանվորների համար կես տարի և մյուսների համար մեկ տարի: Առաջարկում եմ կես տարին թողնել միայն այն բանվորների համար, վորոնք 10 տարուց վոչ պակաս փաստորեն բանվոր են յեղել խոշոր արդյունաբերական ձեռնարկություններում: Մնացած բանվորների համար ստաժը դարձնել 1 ու կես տարի: 2 տարի նշանակել զյուղացի-

ների և կարմիր Բանակայինների համար ու 3 տարի — բոլոր մյուսների համար: Հատուկ բացառություն կարելի յե անել կենտկոմի ԿՎՀ-ի թույլտվությամբ:

Յես չափազանց վտանգավոր եմ համարում առաջ գոփոխության թողնել Զինովել առաջարկած կարճատև ստաժները: Կասկածից դուրս ե, վոր մեղանում շարունակ բանվոր են համարվում այնպիսի անձինք, վորոնք ամենաանշան չափով իսկ լուրջ զպըց չեն անցել խոշոր արդյունաբերության տեսակետից: Հաճախ բանվորների կարգ են գասվում ամենաիսկական մասը բուրդուաները, վորոնք պատահարար և ամենակարճ ժամանակով բանվոր են դարձել: Բոլոր խեղացի սպիտակ-դվարդիականները միանգամայն վորոշակի կերպով հաշվի յեն առնում այն հանգամանքը, վոր, իբր թե, մեր կուսակցության պրոլետարական քնութը, իսկապես ասած, ամենակին չի ապահովում կուսակցությանը, վորպեսզի մասը տնտեսություն ունեցող տարրերը նրա մեջ զերազանցություն չունենան և այն ել ամենակարճ ժամանակամիջոցում: Ինկատի ունենալով մեղնում գոյություն ունեցող անձտապահությունը, աշխատանքի անկանոնությունը, կարճատև ստաժը ուրիշ վոչ մի նշանակություն չի ունենա, բայց միայն այն, վոր իրականում միանգամայն կը բացակայի լուրջ ստուգումն այն մասին, թե արդյո՞ք թեկնածուները քիչ շատ փորձված կոմունիստներ են, թե վոչ: Յեթե մեր կուսակցությունն ունի 300—400 հազար անդամ, ապա ուրեմն այդ թիվն ել չափազանց մեծ պետք ե համարել, վորովհետև ըոլոր տվյալները զկայում են, վոր ներկայումս մեր կուսակցության անդամները բավականաչափ պատրաստու-

թյուն չունեն: Ուստի յես յեռանդագին պնդում եմ, վոր անհրաժեշտ ե ստափի ժամանակամիջոցը յերկարացնել և ապա հանձնարարել Կազմբյուզոյին, վորպեսզի նա մշակի ու խստությամբ կիրառի այնպիսի կանոններ, վորոնց շնորհիվ ստածն իսկապես դառնա ամենալուրջ քննություն և վոչ դատարկ ձեւականություն:

Յես կարծում եմ, այս հարցը հարկավոր ե հատուկ ուշադրությամբ քննության առնել համագումարում:

ԱԵՆԻՆ

24 մարտի 22 թվ.

Այս նամակը գրված ե մարտի 24-ին:

Ընկ. Լենինը սրանով չհանդստացավ. 26-ին նա հանձնում է մի նոր, նույնպես չհրապարակված փաստաթուղթ:

Զգիտեմ ինչու այդ փաստաթուղթը չի հրապարակվել Լենինի Ինստիտուտը պետք ե վոր հրապարակեր այդ փաստաթուղթը:

«Բնկ. Մոլոտովին. խնդրում եմ հանձնել կենտկոմի բոլոր անդամներին՝ կարդալու, մինչեվ վոր կուսակցության մեջ նոր անդամներ բնդունելու պայմանների հարցը կրգրվի համագումարում:

Կարդալով պլենումի՝ մարտի 25-ի այն վորոշումը, վորը վերաբերում ե կուսակցության մեջ նոր անդամներ ընդունելու թեկնածության ստափի ժամանակամիջոցների հարցին, յես կուզեյի այդ վորոշման զեմ առարկել համագումարում: Սակայն, վախենալով վոր համագումարում հանդես դալ անկարող կը լինեմ, խընդրում եմ կարդաք իմ հետեւյալ զիտողությունները.

Կասկած չկա, վոր մեր կուսակցությունն այժմ իր կազմի մեծամասնությամբ բավականաչափ պրոլետարական չե: Յես կարծում եմ, վոչ վոք այդ հերքել չի կարող և վիճակագրական հասարակ տեղեկանքն իսկ կը հաստատի այս փաստը: Պատերազմի ժամանակից վկած Ռուսաստանի գործարանային բանվորների կաղմը շատ ավելի պակաս պրոլետարական դարձավ, քան առաջ եր, վորովհետև պատերազմի ժամանակ նրանք եյին գործարան մտնում, ովքեր ուզում եյին խուսափել զինվորական ծառայությունից: Այս հանրածանոթ փաստ ե: Մյուս կողմից, կասկածից զուրս և նաև այն, վոր մեր կուսակցությունն այժմ, ընդհանուր առմամբ, և միջին հաշվով ավելի պակաս քաղաքական դաստիարակություն ունի (յեթե վերցնենք կուսակցության անդամների խոշոր մեծամասնության կրթական մակարդակը), քան այդ անհրաժեշտ և իսկական պրոլետարական ղեկավարության համար՝ այնպիսի մի գլժժարին բովելում, հատկապես այն ժամանակ յերբ զյուղացությունը հսկայական մեծամասնություն և կազմում, վորն արագ կերպով արթնանում և պատրաստվում և ինքնուրույն դասակարգային քաղաքականություն վարելու: Այսուհետեւ պետք ե ուշադրության առնել, վոր կառավարական կուսակցության շարքերը մտնելու գայթակղությունը ներկայումս չափազանց մեծ ե: Բավական և հիշել սմենովեխովեցների զրական բոլոր յերկերը, համոզվելու համար, թե առնասարակ պրոլետարականից հետու կանգնած վորպիսի հասարակություն և այժմ հրապուրված բայլշիների քաղաքական հաջողություններով: Յեթե ձենովայի կոնֆերենցիան մեզ նոր հաջողություն լերի, այդ զեպ-

քում մանր բուրժուական, պրոլետարականին ուղղակի թշնամի, տարրերի՝ կուսակցության շարքերը մանելու ձգումը հսկայական չափերով կամի: Բանվորներից պահանջվող կիսամյա ստաժը վոչ մի դեպքում չի կարող դադարեցնել այդ հոսանքը, վորովհետև չկա ավելի դյուրին բան, քան արհեստական կերպով այդպես ըստած ձեռք բերելը, մանավանդ վոր բազմաթիվ ինտելիգենտ և կիսակնտելիգենտ տարրերի համար բանվոր գառնալը, մեր պայմաններում, վոչ մի դժվարություն չունի: Այս բոլորից յես յեզրակացություն եմ հանում, վորում յես համոզվում եմ նաև նրանով, վոր սպիտակ գվարդիականները, միանգամայն դիտակգաբար, հաշվեյն առնում մեր կուսակցության վոչ պրոլետարական կազմը, — յեզրակացություն եմ հանում, վոր մենք պետք և զգալի չափով յերկարացնենք թեկնածության ստաժը, և յեթե ե ամիս ժամանակամիջոցը թողնում ենք բանվորների համար, այդ դեպքում, վորպեսզի թե մեզ և թե ուրիշներին խարած չլինենք, անպայման անհրաժեշտ և «բանվոր» գաղափարն այն ձևով վորոշել, վոր այդ գաղափարի տակ դասվեն միայն նրանք, ովքեր, շնորհիվ իրենց կյանքի պայմանների, իրոք պետք և յուրացրած լինեն պրոլետարական հոգեբանություն, իսկ այդ անհնար ե, առանց յերկար տարիներ գործարաններում մնալու և այն ել վոչ թե վորեն կօղմակի նպատակներով, այլ շնորհիվ տնտեսական, սոցիալական կենցակի ընդհանուր պայմանների:

Եեթե իրականությունը տեսնում ենք, պետք և ընդունենք, վոր ներկայում կուսակցության պրոլետարական քաղաքականությունը վորոշողը վոչ թե նրա կազմն ե, այլ այն ամենանուրբ խավի հսկայական ու

անսասան հեղինակությունը, վորը կարելի յե անվանել հին կուսակցական գվարդիա: Բավական ե մի փոքրիկ ներքին պայքար և այդ խավի հեղինակությունը, յեթե նույնիսկ չխախտվի, համենայն դեպս, այն աստիճան կը թուլանա, վոր վորոշումը կախված կը լինի վոչ այդ խավից:

Ուստի անհրաժեշտ ե. — 1) յերկարացնել թեկնածության ստաժների ժամանակամիջոցները. 2) առանձին մանրաղննությամբ վորոշել, թե ինչ և նշանակում թեկնածության ստաժ անցնել, ինչպիսի կոնկրետ և գործնական պայմաններում պետք և ստուգում կատարվի այն մասին, թե թեկնածության ստաժն, իրոք, անցնում են և վոչ թե նա մնում և լոկ իրում ձեականություն. 3) անհրաժեշտ և վորակյալ մեծամասնություն ստեղծել այն հիմնարկներում, վորոնք վորոշում են կուսակցության մէջ նոր անդամներ ընդունելու հարցը. 4) անհրաժեշտ և այդ ընդունելությունը պայմանավորել վոչ միայն նահանգական կոմիտեների, այլև վերահսկիչ հանձնաժողովների վորոշումներով. 5) պետք և մշակել նաև ուրիշ միջոցներ, վորպեսզի կուսակցությունը կարողանա հեշտությամբ ազատավերից, վորոնք ամենեին կոմունիստներ չեն, կոմունիստներ, վորոնք միանդամայն զիտակորեն պրոլետարական քաղաքականություն ևս կիրառում: Կուսակցության նոր ընդհանուր պառում յես չիմ առաջարկում, վորովհետեւ, կարծում եմ, այժմ գործնականում այդ անիբագործելի յե, սակայն անհրաժեշտ և վորեն միջոցներ վորոնել կուսակցությունը փաստորեն զտման յենթարկելու, այսինքն նրա կազմը փոքրացնելու, և յեթե այս հարցի մասին

կուսակցությունը յեվ Ապագիցիան. 2

մատածենք, համոզված եմ՝ մի շարք համապատասխան միջոցներ կը գտնենք:

Յեթե հնարավոր ե, յես կը խնդրելի այս դիմումը կարդացող կենտկոմի անդամներին՝ թեկուղ կարճ հեռախոսագծով ինձ պատասխանել ժողկոմիսորմի քարտուղարուհիներից մեկի անվամբ։
Լենին

26/III 22 թ.

Ընկ. Սարդիս, ահա թե ինչ եր մտածում էնինը և ինչպիս եր մոտենում այդ հարցին։ Դուք կարծում եք, թե կուսակցության առջև ծառացած դժվարությունները, վորոնցից դուք վախեցաք, արդեն անցել են։

Չե՞ վոր դուք հաստատում եք, վոր մեր առջև հսկայական դժվարություններ կան, վոր դասակարգային պայքարը գյուղում սուր բնույթ և ստանում։ (այդ վոք չի ժխտում), վոր այդ դժվարությունները չտեսնված, չլսված չափերի յեն համում։ Դժվարություններից չպետք ե վախենալ՝ Ռւսարյալովի գըր քով առաջնորդվելով։

Այնուամենայնիվ դժվարություններ կան և նըման պայմաններում անհրաժեշտ ե իսկական լենինյան մոտեցում ունենալ կուսակցության կազմի հարցի նկատմամբ։

Մենք մոտենում ենք այն հարցին, թե ով պետք ե մեկնարանի լենինիզմը։ Յեկեք պայմանավորվենք, վորպեսզի լենինին ուսումնասիրենք՝ առաջնորդվելով այն բանով, ինչ վոր լենինը թողել ու կտակել է մեզ։

Լենինի մեկնարանության համար, թույլ տվեք, վոչ վորի մենաշնորհի իրավունք չտալ (ծափահարու-

թյուններ), վորոնց թվում նաև նրանց, ովքեր փորձ են անում, Դելֆյան պատգամախոսի նման գուշակել, թե լենինն ահա այս ե ի նկատի ունեցել լենինն ահա այսպիս ե ի նկատի ունեցել, ահա այս լենինիզմը ե, իսկ այս լենինիզմը չե։

Լենինը բանվոր դասակարգին իբրև ժառանգություն թողել ե իր լենինյան կուսակցությունը և միայն այդ կուսակցությունն ե լենինյան գործի շարունակողը։

Լենինիզմն ամլացած մի ուսմունք կը լիներ առանց նրա այն մասի, վորտեղ խոսվում ե դասակարգի և կուսակցության մասին, կուսակցական ինստանցիաների մասին։

Իսկ դուք այդ մոռացել եք։ Յես շատ ցավում եմ, վոր վոչ ընկ. ընկ. Կամենեն ու Զինվոլնը և վոչ ընկ. Կրուպսկայան մեզ չպատմեցին, թե վորն ե լենինյան մեկնարանությունն այն մասին, թե ինչ բան ե կառավարության գլուխ կանգնած կուսակցությունը, վորոնք են նրա անելիքները, վորոնք են կուսակցության գլուխ կանգնած կուսակցության դրության վտանգավոր կողմերը, կուսակցություն, վորը յենչ թարկված ե կապիտալիստական ողակման։

Ընկ. Կրուպսկայան հիշեց Ստոկհոլմի համագումարի մասին։ Այդ բոլորովին անտեղի յեր։

Ի՞նչ կար Ստոկհոլմի համագումարում։

Այն ժամանակ, նախ և առաջ, կար լերկիմիանական սոցիալ-դեմոկրատական կուսակցություն։ այժմ՝ միասնական կոմունիստական կուսակցություն։

Յեկ ընկ. Լենինը մեզ սովորեցնում եր, վոր միայն այն դեպքում մենք կարող ենք հաղթահարել բո-

լոր գժվարությունները ապահովել սոցիալիզմի գործության շինարարությունը, ապահովել բանվոր դասական շինարարությունը, ապահովել դաշինքը, յեթե կարգի և գյուղացության ամուր դաշինքը, յեթե մենք ունենանք միասնական կոմունիստական կումբներունք (Զայներ տեղերից. «Ճիշտ ե»: Ծափահասակցություն):

Դրա համար նա առաջարկում եր վերակազմության յենթարկել համապատասխան կուսակցական հիմնարկությունները: Դրա համար նա առաջարկում է կենտկոմն ու կվչ ընդլայնելու միջոցով կուսակցության կենտկոմի շուրջն այնպիսի յերկաթե ողակ ստեղծել վորը պահպանի կուսակցության միասնականությունը, կուսակցությունն ապահովի պառականությունը (Զայներ տեղերից. «Ճիշտ ե»: Ծափահարութումից):

Ի՞նչ բան եր Ստոկհոլմի համագումարը: Ի՞նչ բան և 14-րդ կուսամագումարը: Սրանք յերկու անքան է 14-րդ կուսամագումարը: Այս ժամանակ կարելի յեր համեմատելի բաներ են: Այն ժամանակ կարելի յեր պառակտվել և միմյանց ոմբակոծել բանաձեռովք: Այժմ պատրակացներ և պատրակացներուն կառավարել և այն ել գժվարապետք և պատրակացներում:

Իսկ ի՞նչ բան է կուսակցության պառակտումը, Այդ խորհուրդների իշխանության պառակտումն ե, — ահա թե ինչ և նշանակում այդ:

Այժմ անցնենք նշանառության հարցին: Ընկ. Կրուպսկայան մատնանշեց, վոր անզլիական Ընկ. Կրուպսկայան ասաց, վոր ճշմարտության և վոչ ճշմարտության վերաբերյալ հասկացողությունը—սուրբյեկտիվ հասկացողություն ե:

Իսկ մենք միայն մի չափանիշ ունենք: Բանվոր դասակարգը, վորին ղեկավարում ե իր կուսակցությունը, կարող ե ունենալ միայն մի չափանիշ—Լենինյան կուսակցության մեծամասնության կամքը:

Այժմ հերքենք այն զրոյցները, վոր, իբր թե, Զինվորակին ու կամսնեին մեկն ու մեկն ուզում և վոչնշացնել, սեղմել, հեռացնել:

Ո՞վ կընավատա այս բանին:

Ի՞նչ ե, շատ մարդ ունենք:

Ի՞նչ ե, խելագարվել ենք: Կամենեին և Զինվորակին հեռացնել, ինչու: Ի՞նչ պատճառով: Այս ի՞նչ բան ե: Թողեք գուք այդ խոսակցությունները: Ինչից և առաջացել այդ:

Յեկեք պայմանավորվենք այն մասին, վոր յերբ խոսում են դիսցիպլինայի մասին, թող ուրեմն այդ դիսցիպլինան մեկ լինի բոլորի համար (ծափահարություններ), վոչ թե յերկու դիսցիպլինա լինի—մեկը ներքին գործածության համար, իսկ մյուսը քարտերով լայն գործածության համար (ծիծառ), այլ մեր դիսցիպլինա լինի:

Յեկեք պայմանավորվենք նաև այն մասին, վոր մեզ համար՝ լենինիստներիս համար, ճշմարտությունը—կուսակցությունն ե, իսկ վերջինիս կամքը վորոշում և համագումարը:

Դու կարող ես, ի հարկե, այն տեսակետին լինել, վոր այս կամ այն անձնավորությունն այստեղ սիսարան ասաց, բայց վորոշմանը յենթարկվել գու պար-

տավոր ես և բողոքելու տեղ չկա։ Կարող ես կոմինտերանին բողոքել։ Այդպիսի գեպքեր յեղել են։ Կարող ես բողոքել կոմինտերնին։ այդ Գերազույն ինստունցիան ե և իլլիչն այդ մասին ասել ե, բայց... խորհուրդ չի տրվում (ծիծաղ)։ Կուսակցությունը վորուել վերացական անկերպարանք մի բան չե, վորակեսզի նրա մեջ տարքեր կարծիքների և հոսանքների պայքար տեղի ունենան եալլն։

Վահ։

Դուք յեկաք համագումար, ընտրեցիք կենտկոմ, դուք քննեցիք կուսակցության գիծը, վորոշեցիք վերջինիս ուղղությունը, իսկ այնուհետեւ պետք ե լսե կենտկոմին։

Կարծիմ այդպես ե, չե՞ Այդպես ե (ծափահարություններ)։ Այդ այն ե, վոր կոչվում ե զեմոկրատական կենտրոնացում, լենինյան դեմոկրատական կենտրոնացում։

Իսկ այստեղ փորձ ե կատարվում այդ կենտրոնացումը փոխարինել մի ինչ-վոր ուրիշ բանով։

Մեզ ասում են. այժմ անհրաժեշտ ե կարծիքների ազատություն ունենալ, Այդ չի հաջողվի։ Ահա այն բանի գաղտնիքը, վոր Ստալինի շուրջը մհծամանություն կազմվեց։ Այդ ե գաղտնիքը։

Իսկ դուք կարծում եյք, թե մի ուրիշ գաղտնիք կա։ Ասացեք, ինդրեմ, այդ վեր սոցիալական, տնտեսական, քաղաքական և այլ պայմաններն ստեղծեցին այնպիսի դրություն, վոր կենտկոմի քարտուղար Ստալինի շուրջը համախմբվեց կենտկոմի անդամների մեծամանությունը, իսկ ահա, ընկ. ընկ. Զինովիի և Կամենի շուրջը, — վորոնք մինչև այժմ իրենց տարա-

ձայնությունները գրանից չեն հանել և մեզ վոչ մի բանում չեն հանդիմանել, — փոքրամասնություն կազմվեց, դատարկություն տիրեց։ Նրանց շուրջն են համախմբվել ընկ. ընկ. Սակոյնիկովը, կրուպսկայան և այս համագումարում գտնվող լենինգրադի պատգամավորությունը։

Ինչպես պատահեց այդ։

Այդ պատահեց իսկական կոլեկտիվի ղեկավարության հիման վրա, բոլորի ու Քաղբյուրոյի յուրաքանչյուր անդամին նկատմամբ հավասար ու միակերպ վերաբերմունք ունենալուց։

Ահա թե բանն ինչումն ե (ծափահարություններ)։

Ծիծաղելի յե ասել այն, ինչ այստեղ ասացին և ինչ վոր մի քանի ընկերներ փորձեցին այնպես զուրս բերել թե իր մեկն ու մեկն իշխանությունը կենտրոնացը ել իր ձեռքում, իսկ կենտկոմի մնացած մեծամանությունը նրան պաշտպանում եւ։

Այդ ինչպես կարող եր պատահել վահ, ընկ. Կամենե, յեթե դուք հարց եք հարուցում այն մասին, վոր միանձնյա առաջնորդների սիստեմը գոյություն ունենալ չի կարող, մենք ասում ենք. — շարունակ մենք գրա դեմ կովել ենք. այս, միանձնյա առաջնորդների սիստեմը գոյություն ունենալ չի կարող և գոյություն չի ունենա (ծափահարություններ)։

Իսկ վորպեսզի նա գոյություն չունենա, հարկավոր ե աշխատել կոլեգիալ հիմունքներով։ Յեթե դու մի վորուել լոգունգ ես առաջադրում, — այդ լոգունգը քո պաշտոնակից ընկերների մոտ բեր, քննիլ և այնուհետև արդեն ուղղիր կուսակցությանը։

Կավ լսիր, վորովհետեւ կուսակցությունը տասը հա-

ղար անգամ ավելի ուշադրությամբ ե լսում քեզ, քան
Բոկուշևսկուն, վորը գուցե և շատ լավ մարդ ե, բայց
կուսակցությունը նրան դեռ լավ չի ճանաչում: Ահա
թե վորտեղ ե վտանգը: Պատահականություն չեր, վոր
այնպիսի մի փայլուն հուսոր, ինչպիսին Զինովիկն ե,
այն բանից հետո, յերբ նա մեզ խոստայցավ խոսել
կուսակցության զեկավարության մասին, այդ հարցի
վրա սայթաքեց և սկսեց խոսել կուսակցության կազ-
մի մասին: Վերցրեք սղագրությունը և կարդացեք.
«Յես, ընկերներ, —ասում ե Զինովիկը, —պետք ե խո-
սիմ զեկավարության մասին», մինչդեռ սկսեց խոսել
կազմի մասին: Դուք ինչ կարող եք առաջարկել զեկա-
վարության հարցի առթիվ: Դուք ինչ կարող եք ա-
ռաջարկել դեմոկրատիայի մասին: Յես ձեզ հարց հմ
տալիս: Դուք ինչ եք առաջարկում, նազդ ասացեք
(ծափահարություններ): Դուք վոչինչ չեք առաջարկի,
բացի հին, բոլորին հայտնի, կարծիքների աղատու-
թյուն, դիսկուսիաների աղատություն, յերանգավո-
րումների աղատություն լոգունգներից: Իսկ այդ մենք
անգանում են լենինյան կուսակցության քայլայում
(ծափահարություններ: Զայներ. «Ճիշտ ե»):

Ահա թե, ընկերներ, հարցն ինչպես ե դրված:

իլիչը մեզ ինչ ե սովորեցրել: իլիչը մեզ ինչ-
պես ե սովորեցրել: Նա մեզ սովորեցրել ե, թե կու-
սակցության մեջ ինչպես պետք ե աշխատել՝ կուսակ-
ցական հիմնարկների զեկավարությամբ:

Իսկ այդ դուք մոռացել եք: Դուք մոռացել եք,
ինչ ե սովորեցրել իլիչը:

Նա ասել ե. —Յեթե դու աշխատում ես, ապա ու-
րեմն պատասխանատվություն կրիր նրա համար: Վոչ

թե աշխատիր մինչև համագումարի վերջին որը և հան-
կարծ աղաղակ բարձրացրու այն մասին, թե իբր մե-
կը քեզ ներել ե:

Կենտրոնական կոմիտեյում այդ հարցը դուք չեք
հարուցել, իսկ հետո, հանկարծ, հայտնվում եք և ըս-
կում խոսել այդ մնասին:

Ասացեք, ընկ. ընկ. Զինովիկ և Կամենի, յերբ և
գատ յեղել կենակոմի գիծը: Դուք յերբ եք վորեկ գործ-
նական առաջարկ մտցրել և ձեր առաջարկը մերժը-
վել ե:

Յերբ մենք վեճ ունեցինք ընկ. Տրոցկու հետ,
այն ժամանակ նա յեկավ և ասաց. —«Այ, ձեր տակ-
տիքական գիծը սխալ եր»:

«Այսինչ որը յես մտցրի այսինչ գործնական ա-
ռաջարկը և դուք մերժեցիք»:

«Այսինչ որը յես մտցրի նորից այսինչ գործնա-
կան առաջարկը, վորը նույնպես մերժեցիք»:

Դուք ել կարող եք մեզ փաստաթուղթ ցույց տալ
այն մասին, թե դուք յերբ եք ուղղումներ մտցրել և
ինչ ուղղումներ եք մտցրել 14-րդ կուսկոնֆերենցիայի
բանաձեռքի մեջ և յերբ են այդ ուղղումները մերժ-
վել:

Զեք կարող: Դուք համագումարում դուքս եք գա-
լիս և ասում եք. — «Այս բանաձեռք զիջումն ե կուլա-
կին»: Ե՞ չնորհակալություն: Դուք ուզում եյիք չքա-
վորի, միջակի վսահությունը ձեռք բերել և այդ
պատճառով ասում եք, թե 14-րդ կուսկոնֆերենցիայի
բանաձեռք կուսակցությունը վիճում ե անում կու-
լակին:

Ահա թե խոսքն ինչի մասին ե:

Ահա ձեր քաղաքականությունը: Յեվ դրանից հետո դուք ուզնամ եյիք ձեր ասածները հիմնավորել թշվերով: Ընկ. Կույբիչնը դարձյալ ձեզ կասի թշվերի մասին:

Ահա թե ինչու յե շփոթություն առաջ գալիս և ահա թե ինչու Նադեժդա Կոստանտինովնան, աշխատելով պետական կապիտալի հարցն այստեղ ըստ Լենինի մեկնարաննել, այն աստիճան շփոթեց վոր դուքս յեկավ, իբր, նեպը պետական կապիտալիզմ և, վորը թույլատրելի յե վորոշ պայմաններում, կապիտալիզմ, վորը շղթայած պահում և պլոյետարական պետությանը:

Ծնորհակալ ենք ձեզնից լենինյան այդպիսի ուսմունքի համար: Ծնորհակալություն: Այդպիսի լենինիզմ՝ մի սովորեցնեք մեզ:

Վերցրեք 11-րդ համագումարի բանաձեռ արհմիությունների մնասին, վորի մեջ Վլադիմիր Իլյիչն ասել ե, թե ինչ բան և պետական կապիտալիզմը: Նա պետական կապիտալիզմին այլ կերպ եր նայում, քան ընկ. Զինովիը, վորը կրկնում ե, թե նեպը նահանջ ե, նահանջ, նահանջ: Իսկ Վլադիմիր Իլյիչն ուրիշ կերպ և ասել յեղ ձեզնակալ կը բերեմ.

«Հողի ազգայնացման հետ միասին այս հանգամանքը ցույց ե տալիս, վոր նոր անտեսական քաղաքականությունը, սոցիալիստական շինարարության մեթոդներն ու ձեռնուն եյապես փոխելով հանդերձ, բանվորական պետության եյությունը չի փոխում, վորովհետև նեպը հանդուրժում և սոցիալիզմի կառուցողների և վերածնվող կապիտալիզմի միջև գոյությունունեցող մրցակցությունը, վորը կատարվում ե բաղ-

մամիլիոն գյուղացության տնտեսական շահերը շուկայի միջոցով բավարարելու համար»:

(ԲԿԿ (թ) 11-րդ համագումարի վորոշումից արհմիությունների մասին):

Յեվ հետո նա ասում է.

«Սոցիալիստական շինարարության ձեռքի փոփոխությունը հետեւանք ե այն հանգամանքի, վոր կապիտալիզմից սոցիալիզմին անցնելու իր ամբողջ քաղաքականության ընթացքում կոմկուսը և խորհրդային իշխանությունն իրականացնում են այդ անցման հատուկ ձեռքը, շատ հարցերում գործում են այլ ձեռքներով, քան առաջ, զրավում են մի շարք դիրքեր, այսպես ասած «նոր շրջանցում» կատարելով»:

(ԲԿԿ (թ) 11-րդ համագումարի վորոշումից արհմիությունների մասին):

Մեզ ասում են.— Նեպը նահանջ ե, նահանջ, նահանջ, իսկ այժմ ել—պետական կապիտալիզմը և այլն: Թույլ տղեք, ավելի լավ ե, մենք լենինից սովորենք, քան ձեզնից:

Ի՞նչն ե այստեղ Շփորությունը: Ընկերներ, մեր կողմից մենք ամեն բան արել ենք, անում ենք և ամեն բան կանենք, վորպեսզի ընկ. ընկ. Զինովին ու Կամենսկին վոչ միայն չհեռացնենք, այլ չնայած այն վըտանգավոր ուղիին, վորի վրա նրանք կանգնել են, պահենք նրանց մեր կուսակցության համար և պահպանենք նրանց հեղինակությունը, վորպես գործիչների, վորպես կուսակցության առաջնորդների: Յեվ մենք այդ իսկ պատճառով ինդրեցինք ընկ. ընկ. Զինովին ու Կամենսկին, նրանց հորդորեցինք չխորտակել իրենց

այն հեղինակությունը, վորը կուսակցությունն և ըստեղծել (ծափահարություններ):

Յես պնդում եմ, վոր անհերթեթ բան, հեքիաթ և պատմում նա, ով ասում ե, թէ իրը մեկն-ումեկն ուղում ե ընկ. Ծինովկին ու կամենսին ճզմել և այլն: Իսկ յես, վարպես Քաղբյուրոյի անդամ հաստատում եմ և Քաղբյուրոյի բոլոր անդամներն այդ կըհաստատեն, վոր մենք ուղում ենք, վոր գուք մեր շարքերում ինչեք իրբե աշխատավոր, մենք ուղում ենք, վոր գուք ձեր ձեռքերն առաջ չխցկեք, մենք կամենում ենք, վոր ձեզ համար ել դիսցիպլինա գոյություն ունենա, ինչպես մեզ բոլորիս համար, վոր գուք աշխատեք կոլեգիալ հիմոնքներով, կոլեգտիվի միջոցով և վոչ թե կոլեկտիվին զանց առնելով: Այն բոլոր վատանգներից հետո, վորոնց գուք յենթարկեցիք կուսակցությանը, — այս իմ անհատական կարծիքն ե, — պետք ե մաքսիմալ չափով ձեզ ապահովել դայթակղությունից, վորից կուսակցությունը կարող ե ցնցվել ինչպես տեսդից (ծափահարություններ): Դուք խոսում եք այն մասին, թէ կան դժվարություններ, դարաշրջանի փելիսոփայություն, նորից ու դարձյալ դժվարություններ և այլն: Դուք ձեզ անվանում եք ազդանշան տվողներ, սլաքավարներ և այլն: Իսկ անա, ընկերներ, այն դժվարությունները, վոր գուք այստեղ սահեղում եք, — այդ կենինյան կուսակցության միջուկի պառակտաման վատանգն ե: Անավասիկ այն դժվարությունները վոր գուք ինքներդ եք ստեղծում: Վատ ե այն ազդարար և սլաքավարը, վոր գնացքի ճանապարհի վրա պատնեշ ե կանգնեցնում, իսկ հետո ազդանշան և տարիս, — այդպիսին վատ ազդարար ե (ծափահարություն-

ներ): Մենք ձեզ կըխնդրեյինք, վոր այդ դժվարությունները չստեղծեյիք, իսկ այնուհետև արգեն ավելի լավ և ազդանշան չտաք (ծիծաղ): Ճիշտ ե, ազդանշաններ յեղել են և առաջ, ինչպես կենինգրադի կոմյերիտմիությունը, կապույտ թղթապանակը և այլն և այլն: Սրանք նույնպես իր տեսակի ազդանշաններ եյին: Մենք այդ ազդանշանները հասկանում եյինք մեր ձեռով: Դուցե մենք թույլ եյինք կովում նրանց գեմ, սակայն պահպանում եյինք կուսակցության հարստությունը, նրա ուժերը, վորովհետև կամենսի և Զինովի նման, մարդիկ կուսակցությունն ամեն որ չի ստեղծում: Մենք այդ հասկանում ենք: Մենք պահպանում եյինք այն, ինչ վոր կուսակցությունն և ստեղծել: Կուսակցությունն և ստաղծել այդ հեղինակությունը և մենք պահպանում ենք այդ հեղինակությունը: Դուք հարկավոր եք կուսակցությանը: Ուրեմն աշխատեցեք կուսակցության շարքերում: Յեվ յերբ գուք խոսում եք դժվարությունների մասին, — կրնում եմ, հիշեցեք, վոր առաջնակարգ դժվարությունը, վորը շարունակ Վլագիմիր իլյին ընդգծել ե, — այդ կենինյան կուսակցության պառակտարման վատանգն ե: Ուրեմն մի խաղաք զրա հետ (Կուկինը տեղից): «Մենք զրա հետ չենք խաղում»: Ահա վորն ե հիմնական վատանգը: Յես այս ասում եմ, ընկեր կուլին, վորովհետև կենինցրադի կազմակերպության մեջ «Ճախ» թէ ե գոյացել վորովհետև ընկ. Զինովիը ուղեց մի քիչ խաղալ և սկսեց խաղալ կրակի հետ: Ֆրակցիոն կովի տրամաբանությունը մենք զիտենք վոչ պակաս, քան մի ուրիշ բայլշեկի, ձերմակեւ ենք այդ գործի մեջ, մենք շատ լավ դիտենք այդ տըրամաբանությունը: Առաջին շրջանում յերբ անվատա-

հոթյուն, շշուկներ և լուրեր եք սերմանում, դուք ստեղծում եք վարակիչ կարծիք, այն ժամանակ ստեղծվում են ձախ թերթ։ Յեզ յերբ փորձ և արվում առաջն առնել—իսկ յես հավատացած եմ, վոր և կամենել, և՛ Զինովել փորձել են Լենինգրադի կազմակերպության առաջն առնել—արդեն վոչինչ դուրս չի գալիս։

Պետք է կարողանանք հաղթահարել նախապաշար-մունքները, և այն, ինչ վոր դուք սովորեցնում եյթք ընկ. Տրոցկուն, խորհուրդ եմ տալիս նույնն ընդունել ձեզ համար իրրե դաս (ծափահարություններ)։ Մենք ասում եյթք, վոր պետք է կարողանալ ժամանակին խոստովանվել սխաները և գլուխ խոնարհել կուսակցության կամքի առաջ։ Յեզ հենց այստեղ ել արեք այդ (Աղմակալից ծափահարություններ, վոր փոխվում են սփացիալից Բոլորը վոտի յեն կանգնում)։

ՀՀ Ազգային գրադարան



NL0185748

ԳԻՒՆ Ե 15 ԿՈՂ.